

Ձուգասզեան խղճմտօրէն պատրաստած է զանազան ցաներ՝ յաւելուածին մէջ, նաեւ «ծանօթագրութիւններ», բառարաններ, դրացանկ, յատուկ անուանց ցանկ:

Շնորհակալ ենք Ձուգասզեանի եւ Մատենադարանին՝ որ այս կարեւոր աղբիւրը մատչելի ըրին հայ բանասիրութեան:

Թ. ԳԻՒՐՏԵԱՆ

* * *

ԱՒԱՆԴԱՊԱՏՈՒՄ

Գրեց

ԱՐԱՄ ՂԱՆԱԼԵԱՆ

Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Հրտ. 1989, էջ ձև + 530, 1 գումարը եւ 33 սեւ-մեքմակ մը կարմիրով, ուրածով, լաթակազմ, տըպագմակ 5000:

Ընտրի աշխատութիւն մըն է, արժանի յուշարձան Ղանալեանի վաղամեռիկ զաւակին՝ «Տիգրանիկի անմոռաց յիշատակին»:

Շահեկան «Առաջաբան»ին մէջ, հեղինակը իրաւամբ կ'ըսէ որ «Աւանդութիւնները ժողովրդական բանահիւսութեան այն տեսակներէն են, որոնք մեզանում մինչեւ այժմ չեն արժանացել քիչ թէ շատ ամբողջական հրատարակութեան» (էջ 5.): Վաստակաւորն Ղանալեան այս կարեւոր պակասը կը լրացնէ ներկայ բազմաշխատ եւ ստուարութեթ հատորով:

Հեղինակը՝ ի բնէ զգայուն՝ մեծ գուրգուրանքով ի մի հաւաքած է հայկական աւանդութիւնները, զանոնք խընամբով խմբաւորելով: Գործը իրապէս տիրանալիս վաստակ է, քանի որ ամբողջ հայաշխարհ, իր բազմահազարեան անցեալով, աւանդութեանց այլատեսակ զանաւորան մըն է, Երեւութապէս անըսւառ: Ղանալեան ըրած է ինչ որ կարելի է մարդկօրէն կատարել, առանց ունենալու նման նախաձեռնարկներ: Հըսկայական աշխատանք է կատարած պըրպըտելով մեր մատենագրութիւնը, պարբերական մամուլը, բերանացի աւան-

դութիւնները, համադրելու համար այս գործը: Արամ Ղանալեան խօսելով իր նպատակին մասին՝ կը գրէ. «Հայ ժողովրդական աւանդութիւններին նուիրուած ներկայ հատորը, ... նպատակ ունի ի մի բերել մեզ մատչելի տպագիր ու ձեռագիր աղբիւրներում եղած համապատասխան բոլոր նիւթերը»: իր աշխատութիւնը կը բովանդակէ:

1) Ուսումնասիրութիւն, որ ունի երեք հիմնական դուռ. ա. Աւանդութիւնների մասին ընդհանրապէս, բ. Հայոց ազգային աւանդութիւնները, գ. Միջազգային եւ երկամուտ աւանդութիւններ. 2) Աւանդապատում, որ իր հերթին բաղկացած է երեք մասերէ. ա. Ստուգարանական եւ բացատրական աւանդութիւններ, բ. Վարքաբանական աւանդութիւններ. ասոնցմէ ետք՝ կու գան Աղբիւրներ եւ Ծանօթագրութիւններ, եւ վերջապէս Ցանկեր:

Ուսումնասիրութեան մասը կը դրաւէ հատորին՝ սկիզբի ձև (190) էջերը, որմէ ետք կը սկսի բուն հատորին 1 էջահամարը:

Շահեկան պիտի ըլլար եթէ Ղանալեան (էջ 4.) հետապնդէր Տրդատի Հաւրանի թուրին աւանդութիւնը, որ իրապէս բացատրութեան կը կարօտի եւ կարօտ է մեկնութեան: Իսկ էջ ԾԹ. չի ծանրանար Լուսաւորչի վերագրուած աւանդութեանց վրայ. օրինակ՝ Վերապին մէջ օձերու եւ վարիճներու մէջ նետուելը, որ կը յիշեցնէ Դանիէլ մարգարէի առիւծներու դուրը նետուելը. Լուսաւորչի բազմատեսակ չարչարաններու աւանդութիւնը. Տրդատի խոզանալու զրոյցը, անոր վերագրուած ոյժի կատարումները:

Հին Ձուգայի կամուրջի համար Քրոնովոսիկի դրամ լցնելու՝ աւանդութիւնը՝ Ձուգայեցիք իրենց հետ բռնազաղթին տարած են Նոր Ձուգայ, Սպահան, ուր գետին վրայ շինուած կամուրջին հիմքին տրուելով՝ իբր թէ անոր ընթացքը կը կեցնեն շանի կոչուած արծաթ դրամով: Այդ կամուրջը Նոր Ձուգայեցիներուն ծանօթ էր իբր «Շահապի կամուրջ», որով աւանդութիւնը՝ որ կրնայ շատ ա-

ւելի հին ըլլալ՝ մեծագոր հարստութեան մասին է (էջ ԿԹ.):

Էջ ԾԳ. Աղջկայ բերդի կամ Աղջիկտղի աւանդութիւնը՝ միջազգային ծագում ունի եւ համանման է Ռոմէօ-ձուլիթի աւանդական պատմութեան. անտարակոյս՝ շատ ու շատ հին:

Աւանդութեանց ուսումնասիրական մասը կ'աւարտի էջ ձՂ. Այս մասին մէջ, մենք որեւէ յիշատակութիւն չգտանք «Պատմութիւն» գրքի մասին, որ ամբողջապէս միջնադարեան աւանդութեանց հաւաքածոյ մը կ'երեւի: Գրեգոր Դերէնի, Թէոդորոս Ռաշտիի, Վարդ Պատրիկի եւ այլ բազմաթիւ պատմաբանները պարզապէս աւանդութիւններ են, Հայրիկանդեան եւ Հայ-Արար յարաբերութեան խտացումներ, որոնք պէտք էր որ յիշուէին:

Էջ 1ով կը սկսին «Ստուգարանական-բացատրական աւանդութիւններ» իրենց մասնաբաժանումներով՝ եւ տարբերակներով: Բնական է, աւանդութեանց մեծագոյն մասը Արեւելեան Հայաստանէն են, եւ համեմատաբար քիչ են թրքական մասի Հայաստանէն եւ հայ կեդրոններէն, պարսկական բաժնի Հայաստանէն եւ զաղութներէն, ինչպէս նաեւ Կիլիկիան շրջանէն եղածները: Անկասկած, կատարուած աշխատութիւնը՝ որքան ալ հսկայական՝ չէ կարելի մեկնել որ կարելի ըլլայ մէկ մարդու, նոյնիսկ Արամ Ղանալեանի նման աննկուն վաստակաւորի մը միջոցներով ամբողջական կատարել: Բացառկայ են, օրինակ, Սրբնիկ եւ Եկեղեց գաւառ՝ իր Սեպուհով, Սրբորով (Սուրբ Գիրգոր) Լուսաւորչի աւանդութիւններով (Ջարջարանաց Լուսաւորչի, տատակի արտ, Մեկատեղի). չեն յիշուի Ջորհանգիստ, Սըրբի Սր. Թորոս, Լուսաղբիւրներ, Տրդատի սուրով ճեղքուած ժայռ, Հոբիփիմէի եւ Մարիամի քարայրներ, Բարեհամ աղբիւր, ինչ սրբոյ գերեզմանը, եւայլն, եւայլն:

Էջ 417, կը սկսի «Աղբիւրներ եւ Ծանօթագրութիւններ». կ'աւարտի էջ 488, որմէ ետք հայկական աւանդութեանց աշխարհացոյց մը կը տրուի: Անուանա-

ցանկերէ եւ լուսանկարներէ յետոյ կը տրուի բովանդակութիւնը եւ վերապահներու ցանկ մը:

Մենք հիացումով է որ կը փակենք հատորը: Հեղինակը՝ բազմավաստակ եւ մեղուական Արամ Ղանալեան՝ հայրենանուէր շունչով մը պատրաստած է աշխատութիւնը, ուր ամբարած է անհուն դանձ՝ ապագայ դարեան վաստակներու համար: Մեծապէս երախտապարտ ենք իր այս գեղեցիկ, հանրամատչելի եւ արժէքաւոր գործին համար:

Թ. ԳԻՒՐՏԵԱՆ

* * *

ՎՐԱՑԱԿԱՆ ՁԵՆԱԳԻՐՆԵՐ

Ծանօթագրեց

ՀԵԼԷՆ ՄԱՅԱՎԱՐԻԱՆԻ

Թբիլիսի, 1970, գումարը պատկերագիրք՝ 50 քերք, սկիզբը՝ 48 էջ ներածական, վրացերէն, ռուսերէն եւ անգլիերէն:

Ներածականին մէջ կ'ըսուի որ վրացական գրագիրները, որոնք վրացական մշակոյթին դանձարանին մէջ մասնաւոր տեղ կը գրանեն, մինչեւ Ծ-Ջ դարեր հնութիւն ունեցող կրկնագիրներ ունին: Կը յիշուին բազմաթիւ մանրանկարչական կեդրոններ կամ վայրեր, ուրկէ եկած են մանրանկարեալ ձեռագիրներ, որոնց շարքին՝ նաեւ ԺԳ. դարէն, էջ-միածնէն: Ձեռագիրները այժմ կը պահուին Գ. Գեղեղիմէի անուամբ ձեռագրաց Հաստատութեան մէջ, որ մաս կը կազմէ Վրաստանի Գիտութեանց Ակադեմիային:

Որոշ է որ վրացական մանրանկարչութիւնը կը սկսի Թ-Ժ դարերուն՝ փաստացիօրէն, թէեւ կ'անթադրուի աւելի կանուխ դոյութիւն: Ատիկա կը տարբերի անով որ հայ մատենագրութիւնը անտարակոյս կերպով ցոյց կու տայ դըրձագրական մանրանկարչութեան գոյութիւնը դեռ Զ-Է դարերուն: Վրթանէս Գերթոն է որ կ'ասուած չի թողուր այդ մասին՝ իր ՅԱՂԱԳՍ ՊԱՏԿԵՐԱՄԱՐՏԻՑ մեծարժէք գործին մէջ, Գուցէ օր մը

վրացական ենթագրությունը ապացուցում է, քանի որ Ս. Մեսրոպ Մաշտոցի վրացական գերեզմանը գտնվում է հայ գրիչները եւ ծաղկողները օգնած ըլլան վրացի «մտքերակներ» (գրիչներուն), ղեղեկողները գերելու եւ ծաղկելու իրենց գրչագիրները, ինչպէս որ կը կատարուէր Զ. դարուն՝ Հայաստանի մէջ:

Շահեկան են Հելէն Մաշալարիանի ընդհանուր ընկերակցութեան իւրաքանչիւր նկարի մասին: Կը հաստատուէր որ «ԺԱ-ԺԲ դարէն (վրացական) ձեռագիրներէն ոմանք գրուած են վրաստանէն դուրս գտնուած վրացական վանքերու մէջ, ուր վրացի վանականները աշխատած են օտար վանականներու հետ. այս իրենց առիթ տուած է սորվելու ընդհանուրական գիրը ձեռագրելու կերպերը, եւ փորձառութիւն մանրակարգելու» (էջ 43): Ասիկա արդարեւ կ'ապացուցուի վրացական հին ձեռագիրներու մանրակարգութեան մէջ: Վրացի մանրակարգիչները ազդուեցան ընդհանուրական մանրակարգութեան, որովհետեւ Հայերուն պէս չէին արգելուած Բաղկեղտնականութեան պատճառով: Այդ իսկ պատճառով՝ վրացի մանրակարգիչները ղեկավարութիւն կրեցին վրացական ինքնուրոյն մանրակարգութեան պահելը չեղտուած կերպով: Յետոյ իրենց աշխարհական կեանքը, աւելի ազատ՝ մասնատական անմիջական բունտարութեան եւ ճնշումէն, որուն ենթարկուած էին Հայերը, հնարաւորութիւն տուաւ ուղղակի ազդուելու իսլամ աշխարհիկ մանրանկարչական արուեստին: Ասիկա շատ ակնառու կերպով կ'երեւի մանաւանդ Սալաֆեան շրջանին, երբ վրացական ձեռագիրները գրեթէ բոլորովին պարակական արուեստով մանրանկարչեցան:

Երկու խօսք՝ Ժրուէի (առաջին) Զորս Աւետարաններու ձեռագրին մասին, որ ձեռագրատան թիւ Հ-1660ը կը կրէ, եւ որ գրուած է Բրիտանոսի 940 թուականին: Հակառակ մանրանկարներուն եղծուած վիճակին, որոշ է որ ընտիր մանրանկարեալ ձեռագիր մըն է, որուն մանրանկարները՝ սակայն՝ աւելի հին ձե-

ռագրէ մը օրինակուած կ'երեւին, մանաւանդ այն՝ ուր Յիսուս կը բռնէ ցաւարը, եւ հրաշքի ալ մանրանկարներ, որոնց վրացերէն մակագրութեանց հետ միշտ կը դրոշմուէ հայերէն երկաթադիր ՅՍ ՔՍ, այսինքն «Յիսուս Քրիստոս»: Այս ձեռագրին մանրանկարիչը կը յիշուի «Թէոփոր»: Այս գրիչին, որ կրնայ մանրանկարիչը ըլլալ կամ լոկ գրիչը, շահեկան է երեք մանրանկարներու մէջ ՅՍ ՔՍ գրելը: Վրացի գրիչ մը կամ մանրանկարիչ մը, վրացերէն իր ձեռագրին մէջ, անհաւանական է որ ՀԱ-ՅԵՐԷՆ գրէր, որով գուցէ գրիչը վրացագրէ հայ գրիչ էր:

Մանրանկարչական սքանչելի ձեռագիր մըն է Գրիգոր Աստուածաբանի դոժմերը պարունակող թիւ Ա-109, ԺԲ. դարէն: Առանց ընդհանուրական արուեստի ազդեցութեան, թիւ Ա-65ին (1188էն) չափ կարեւոր եւ շահեկան է, եւ կ'արժէ ուշի ուշով ուսումնասիրել: Մանրանկարիչը իրապէս կարող եւ տաղանդաւոր անձ մը եղած է: Շատ շահեկան է նաեւ, մանաւանդ իր շարադրանքով, Ժրուէի երկրորդ Աւետարանն ալ, խիստ կարեւոր մանրանկարներով. այս թիւ Հ-1667 Աւետարանը գրուած եւ մանրանկարչութեան կը նկատուի ԺԲ. դարուն, գուցէ պէտք է նշանակել ԺԳ. դարուն առաջին կէսին: Այս վրացերէն ձեռագրին մանրանկարներն ալ բացառիկ արուեստով կիրարկուած՝ տաղանդաւոր, ապրող եւ կորովի մանրանկարիչ մը ցոյց կու տան:

Հետզհետէ այսպիսի շահեկան գործերով աւելի ու աւելի կը ծանօթանանք վրացական արուեստի դանձերուն, որոնցմէ շատ բան կը սորվինք, ընդլայնելու համար մեր ծանօթութիւնը՝ հայ արուեստի գործերուն մասին: Հայաստան ընդմէջ վրաստանի եւ անսահմաս պատակող կիսավայրերի հորդաններուն, շատ աւելի տուած է՝ մեծամեծ կորուստներով. այսպէս կրնանք բացատրել վրաստանի դանձերուն համեմատաբար նուազ ոչնչացումը, որոնք մեզի այժմ կարեւոր նորութիւններ կը պարզեն:

Յ. ՔԻՐՈՍՏԵԱՆ

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՑԱԾ ԵՆՔ

Ա. Ա. Մ. (Արտակ Արքայ. Մանուկեան). Կրօնի դասագիրք, Ե. դասարան: Թեհրան, տպ. «Ալիք», 1974, էջ 48:

Ա. Ա. Մ. - Կրօնի դասագիրք, Զ. դասարան: Թեհրան, տպ. «Ալիք», 1975, էջ 72:

ԱՅԿԱՅԵԱՆ ՄԱՌԻ. - Յաւերթական ուղիներով (Ծաղկաբաղ ընթերցանութեան): Փարիզ, հրատ. Տօնիկեան (Պէյրուս), 1974, էջ 466:

ԱՅԿԱՅԵԱՆ ՅՈՎՀ. - Գարուն ամբան մէջ (Բանաստեղծութիւններ): Պէյրուս, տպ. «Սեւան», 1975, էջ 99:

ԱՆԴՐԵԱՆՆԱՆ Վ. - Նոր Զուգայի Ս. Կատարինեան ազգային երկուսն որբանոցները: Նոր Զուգայ, տպ. Ս. Ամենափրկչեան վանքի, 1974, էջ 100:

ԱՐԱՐԱՏԵԱՆ ՄԱՍԻՍ. - Կեանքի Սէնֆոնին (Հայերէն, արաբերէն, ու ֆրանսերէն լեզուով Յառաջարանէ մը ետք՝ 20 նկարներ, չորսլեզուան ստորագրութեաներով. հայ կեանքի արտայայտութիւններ 1910էն մինչեւ մեր օրերը):

ԱՐԾՐՈՒՆԻ ԾԱՀԱՆ. - Երաժշտութիւն (Տարբերական դասընթաց): Իսթանպուլ, տպ. «Պուքէթ», 1962, էջ 46:

ԱՅԻԿԵԱՆ ՎԱՀԱՆ. - Ութ օր Սեւանում: Թեհրան, տպ. «Ալիք», 1974, էջ 64:

ԲԱԼԱՅԵԱՆ ԵԶԵԿԻ ՎՐԻ. - Հերթում Եւրոպայի վիճակներու ստապատում վարդապետութեան: Պէյրուս - Անթիլիաս, 1974, տպ. Կթղի. Մեծի Տանն Կիլիկիոյ, էջ 64 (փոքրագիր):

ԲԻԻԶԱՆԻ ԷԼԼԷՆ. - Նոր կիւն: Թեհրան, տպ. «Ալիք», 1960, էջ 144:

ԲԻԻԶԱՆԻ ԷԼԼԷՆ. - Երկերի ժողովածու: Թեհրան, տպ. «Մոզերն», 1961, էջ 428:

ԲԻԻԶԱՆԻ ԷԼԼԷՆ. - Կարսը եւ Ախպէր Աշոն: Թեհրան, տպ. «Մոզերն», 1962, էջ 328:

ԳԱԶԱՆԾԵԱՆ ԶՈՒԼԱԼ. - Արեւադէի մը նման (Քերթուածներ): Փարիզ, 1975, էջ 108 (Մատենաշար «Յառաջ»):

ԳԱԼՈՒՍՏԵԱՆ ՇՆՈՐՀԻ ԱՐԲՊՍ. (ՊԱՏՐԻԱՐԲ ՀԱՅՈՑ ԹՈՒՐԳԻՈՅ). - Աւագ Շարաթ: Պէյրուս, տպ. «Տօնիկեան», 1974, էջ 208:

ԳԱՐԱԼԷԲԵԱՆ ԱԶՆԻԻ. - Անվերջակէտ ճամբորդութիւն (Քերթուածներ): Պէյրուս, տպ. Համազգայինի, 1974, էջ 46:

ԳԵՂԱՄ-ԳԵՂԱԿ. - Սանձակոծ երկվարը (Քերթուածներ): Պէյրուս, 1973, տպ. «Տօնիկեան», 1973, էջ 136:

ԳԵՂԱՄ-ԳԵՂԱԿ. - Հայկական նոր դիցարանութիւն, Բ. հատոր: Պէյրուս, 1974, էջ 208:

ԳԵՂԱՄ-ԳԵՂԱԿ. - Ռադմերդ - եռամսյն. Վեցի վիտի վիշի: էջ 135:

ԺԱՄԿՈՉԵԱՆ Բ. Կ. - Պատմութիւն Մամիւրէթ Իւլ Աղղի դերման որբանոցներուն: Պէյրուս, հրատ. «Տօնիկեան», 1973:

ԿՈՊԵԼԵԱՆ ԵՐՈՒԱՆԻ. - Աշխարհի ինչերորդ հրաշալիքը (Պատմութեան): Իսթանպուլ, «Կոպէլ» հրատ. 1974, էջ 168:

ԿՈՍՏԱՆԴԵԱՆ ԵԱՐՈՒԹ. - Բանաստեղծութեան: Պէյրուս, տպ. Համազգայինի, 1974, էջ 82:

ԿՈՒԱՐԷՍԻ ԺՈՒՎԱՆԻ. - Տոն Գամիլոյի պոետիկ աշխարհը (Թրքմ. Պարզեւ Մեհրեան): Հայէպ, 1957, էջ 328 (Մատենաշար «Արեւիկ» օրաթերթի):

ՃԳՆԱՒՈՐԵԱՆ ՀԱՅԿԱԶ Ա. - Յուշ եւ փառաբան (Ճառագող), Ա. հտ.: Թեհրան, տպ. «Արաքս», 1972, էջ 254:

ՄԵՀԵԱՆ ԿԱՐՕ. - Ալեծուհի Զուրբեր (Պատմութեան եւ աւանդութիւններ): Պէյրուս - Անթիլիաս, տպ. Կթղի. Մեծի Տանն Կիլիկիոյ, 1973, էջ 204: